10219361

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 14. 1857 ՅՈՒԼԻՍ 15.

բարոյական

ԻՐԵՔ ԹՈՒՈՑՆ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ [1]

Դատաւոր մը իրեք բան պէտք է ունենայ. արդարութիւն, խոհեմութիւն և անաչառութիւն։

Իրեք բան անհամբաւ կ'ընեն զմարդ. սուրբ կրօնը արհամարհել, հայրենիքը մատնել, և կնկան պակասութեանց աչք գոցել։

Ինին իրեք աղէկութիւն ունի երբոր չափով խմուի. միտքը կը պարզէ, մարմինը կը զօրացընէ, և կ'ուրախացընէ։

Իրեք դժուարին բան ըստ Ինիլոնի. նախատանաց համբերել, ժամանակը աղէկ կարգի դնել, և գաղտնիք պահել։

Իրեք բան զգուշաւոր կ'ընեն զմարդ. Համբորդութիւն, կռիւ և քանտ։

Դիշերուան իրեք բարեկամները. գող, սիրահար և պարտատէր։

Օրէնքը իրեք օգուտ ունի. մարդուս ունեցածը կը պահպանէ, ամբարիշտները կը սանձէ, և միաբանութիւն կը պահէ մարդկանց մէջ։

Ընիրաւութեան ընկերները իրեք են. մեծաւաճառութիւն, խորամանկութիւն, և վրէժխնդրութիւն։

Իրեք կերպով բարեկամը կը պահուի. սիրելով, պատուելով և ծառայելով։

Շխարհքիս իրեք երևելի տաճարները. Սողոմոնինը, իրեն մեծագործութեանն համար, Եփեսոսի Նահատայ տաճարը՝ հարստութեանցը համար, և Պատիկանինը՝ իրեն վսեմութեանը համար։

Իրեք դժուարին բան. թշուառութեանց մէջ բարեկամ մը գտնալ, անկարգ մարդու մը սովորութիւնները փոխել, և արքունեաց մարդ մը համոզել որ մէկ թշուառի մը վրայ գութ ունենայ։

[1] Տես երես 85, 117, 149, 181։

Աղեքսիկացի տղայ մը երբոր ծնանի՝ իրեք բառ կը զուրցեն իրեն. համբերէ, կրէ և լուռ կեցիր։

Իրեք օգուտ ունի մարդկանց միաբանութիւնը. խաղաղութիւն, առատութիւն և փառք։

Իրեք զօրաւոր բաներն. բաղդը յանդգնութեան հետ՝ դիւցազուններ կը յարուցանէ, առաքինութիւն խոհեմութեան հետ՝ կը մեծցընէ զմարդ, կրօնքը խոնարհութեան հետ՝ արդար կ'ընէ զմարդ։

Առաքինութեան և ախտի վրայ իմաստունի մը զուրցած իրեք ճշմարտութիւն. ախտը կը հագուի կը կապուի կ'երթայ ու կառքով կը քալէ. խեղճ առաքինութիւնը ծոմ կը պահէ, մերկ կ'երթայ և բոպիկ ճամբայ կ'ընէ։

Պատմութեան վրայ իրեք ճշմարտութիւն. վկայ է ժամանակայ, լոյս ճշմարտութեան, և կենաց վարդապետ։

Հոգւոյն իրեք սքանչելի զօրութիւնները. անցեալը կը յիշէ, ներկան կը կշռէ, և գալիքը կը գուշակէ։

Ընկերական առաքինութեանց գլխաւորներն իրեք են. պարզութիւն, մաքրութիւն, և բարի հաւատք։

Պատաւոր մը իրեք մաքուր բան պէտք է ունենայ. մաքուր լեզու՝ որպէս զի անիրաւ վճիռներ չտայ, մաքուր աչքեր՝ որպէս զի արտաքին տեսքէն չխաբուի, վերջապէս մաքուր ձեռքեր՝ որպէս զի ստակով չկաշառուի։

Իրեք առաջնորդ ունի մարդ իր կենացը մէջ. յուսոյ ծառը, խոհեմութիւն ղեկը, և աստուածային օգնականութեան աստղը։

Իմաստունի մը իրեք աղուոր վճիռներ. պարզութիւնը իմաստութեան մեծ նշան մըն է. բարեխառնութիւնը՝ մեծ դեղն է, և մաքուր խղճմտանքը՝ ամենամեծ գանձ մըն է։

Պրեթէ իրեք բան զմարդ կը կուրացընեն. հեշտութիւն, շողոքորթութիւն և վրէժխնդրութիւն։

Ամենքը իրեք վախճան ունի. օգտակարը, հոգւոյն բարիքը և փառքը։

Պողիբիոս իրեք խրատ կու տայ. նայէ որ ամէն մարդ քու բարիքդ ուզեն, մէկ բարեկամ մը ունենաս, և ոչ մէկ թշնամի։

Իրեք բան որ գանձ կը դիզեն մարդուն. մուտքը ելքը աղէկ չափել, բարիք ցանել՝ փառաւոր պտուղ ժողվելու համար, և կրից սանձ դնել։

Լաւագաւորի մը իրեք հարկաւոր բաներ. ոյժ, խորհուրդ և արդարութիւն։

Իրեք տեսակ ապերախտ կայ. ան որ առած բարիքը կը մոռնայ, ան որ կը կեղծէ, և ան որ միջոց ունի ու չհատուցաներ։

Ճշուառութեան մարդուս ձգած իրեք օգտակար յիշելիք. թէ որ ծոյլ ըլլաս՝ խեղճութենէ կը պաշարուիս, թէ անառակ ըլլաս՝ ծերութեանդ ատեն անօգուտ զղջում մը սիրտդ կը տանջէ. իսկ թէ որ անհաւատարիմ ըլլաս, ամենուն զզուելի կ'ըլլաս։

Իրեք ճշմարտութիւն, առատամտին, անառակին և ագահին վրայօք. առատամտին ստակը ամէն բան կը շինէ և միշտ կ'աճի. անառակինը քչի կ'օգտէ և շուտով կը լմննայ, իսկ ագահինը քաշուող է, որ մարդկութեան չծառայելով կը փտի։

Պարդուս իրեք հարկաւոր բաներ. շարունակութիւն աշխատութեան մէջ, չափաւորութիւն ծախքի մէջ, և բարեխառնութիւն ուտելու խմելու մէջ։

Իրեք բանի մէջ ուրիշի վստահանալու համար լաւ մտածելիքը. աղէկ վարպետ մը ընտրել տղան դաստիարակութեան չտուած, աղէկ նաւավար մը՝ դեռ ինք զինքդ անոր չյանձնած, և աղէկ բժիշկ մը՝ կեանքդ անոր ձեռքը տալէն առաջ։

Լաւ գրելու համար իրեք բան պէտք է. քերականութիւն անսխալ գրելու համար, տրամաբանութիւն ճշդութեան համար, և ճարտասանութիւն խօսքին զարդ տալու համար։

Իրեք վտանգաւոր բան. ջերմ մարդու մարմնոյն մէջ, կրակ տան մը մէջ, կռիւ քաղաքական՝ երկրի մը մէջ։

Նուշութեամբ զուրցուած խօսք մը իրեք օգտակարութիւն ունի. բարկու-

թիւնը կ'իջեցընէ, բարեկամութիւնը կը շատցընէ, և դիմացինին սիրտը մագնիսի պէս իրեն կը քաշէ։

Քաղաքակրթութեան իրեք անուն կը տրուի ընդհանրապէս. մնուցիչ քաղաքականութեան, սպաննող բարբարոսութեան, օրէնսդիր բարի վարուց։

Իրեք բանի մէջ ճշմարիտ բարեկամը կը ճանչցուի. վտանգի, թշուառութեան և բանտի մէջ։

Իրեք բանէ հեռու կենալ. մեծ խոստմունքներէ, պարարտ և օգտակար դաշինքէ և մատնչէ։

Իրեք բան կայ որ կ'օգնեն մարդու հանգիստ ապրելու. իրաւունք, անդրադարձութիւն և խոհեմութիւն։

Իրեք ահաւոր ճշմարտութիւն ծնողքը արհամարհողին վրայ. կարճ կեանք մը կ'ունենայ, թշուառ կեանք մը կ'անցընէ, և սարսափելի վախճան մը կ'ունենայ։

Իրեք բան զմարդ անմահ կ'ընեն. բարի անուամբ ապրիլ, հայրենեաց համար մեռնիլ, և առաքինի որդիք թողուլ։

Իրեք ակնիւ սկզբունք քաղաքական ընկերութեան համար. շատ չխօսիլ, մտածել խօսելէն առաջ, և աղէկ պահել իր գաղտնիքը։

Իրեք բան որ անկարգութեանց կը տանին. գէշ դաստիարակութիւն, չարութեանց հակումն և վերջին կարօտութիւն։

Տղոց ծնողաց վրայ ունենալու իրեք պարտքերը. սէր, յարգութիւն և օգնութիւն։

Իրեք պատճառի համար տխուր են ծերերը. տխուր անցեալին յիշատակին համար, ժամանակ ներկայ նեղութեանց համար, և խռոված ահաւոր գալիքին վրայ։

Իրեք բանի օրէնքը չի զօրեր, սիրոյ, քնոյ, և վախի։

Ա. Ռ Ա. Կ

ԵՐԻՆՋՆ ՈՒ ԱՃԾ ԵՒ ՈՉԽԱՐ

Երինջն ու այծ եւ մէկ իրենց քոյրն ոչխար
Կը զուրցուի թէ օր մ' ընկեր են եղեր
Մէգ առիւծի մ' հետ որ էր այն կողմանց տէր,
Դաժնելու շահն ու վընասն հաւասար։
Այծուն ծուղակն որս եղջերու մը կ'իյնայ
Շուտ մ' ընկերացն իմաց կ'ընէ, եւ կու գան՝
Առիւծն հոնտեղ իր ճանկերով կը հատրէ,
Որս էնք, կ'ըսէ, չորս մաս որսն ալ կը պատռէ,
Որ մէջերնին բաժնուին։
Ինք կ'առնու մէկն իր մեծութեանը բաժին.
Այս ինձ կ'իյնայ, կ'ըսէ, պատճառն է յայտնի՝
Օր առիւծ եմ. ով աս քանիս իսօք ունի։
Երկրորդ մասն ալ՝ արդարութիւն է ինձ տալ.
Աս ալ աղէկ գիտէք դուք
Ուժովինն է իրաւունք։
Դաշն եմ ձեր մէջ, ինձ պէտք է տաք երրորդն ալ
Այ է անոր որ ձեզմէ
Որրորդ մասին ձեռք զարնէ։

ԼԱՖՈՆԹԷՆ